ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 151

ք. Երևան 28.11.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 00481595, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Էրեբունի, Մուշական 8փ. 92տ) միջև 26.12.2022թ. կնքված N ՀՄԱՇՁԲ-22-10/33-1 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 10.10.2023թ. կնքված N 2 Փոփոխության, 11.03.2024թ. կնքված N 2 համաձայնագրի շրջանակներում «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը մինչև 2024թ. նոյեմբերի 30-ը պետք է կատարի 943,314,266 (ինը հարյուր քառասուներեք միլիոն երեք հարյուր տասնչորս հազար երկու հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն սույն թվականի նոյեմբերի 14-ի դրությամբ Ընկերությունը չի կատարել 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամի աշխատանքներ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետը (կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. նոյեմբերի 18-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամի չափով չկատարված աշխատանքների մասով:

Հաշվի առնելով, որ «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ